

Ամստերդամի հայկական տպարանները և Ամստերդամի համալսարանի գրադարանի հայկական հնատիպ գրքերը

Աննա Մարիա Մալդարա Ամստերդամի համալսարան

Մատթեոս Ծարեցին, որ եղել էր Փիլիպոս Ա Աղբակեցի Կաթողիկոսի նոտարը, 1656 թվականի մայիս ամսին Ջնուռնիայից մեկնում է Եվրոպա: Հակոբ Դ Զուղայեցի Կաթողիկոսը նրան հանձնարարել էր գնալ Իտալիա ու այնտեղ տպարան հիմնել, հայերեն լեզվով Աստվածաշունչ տպագրելու նպատակով: Քառասուն օր տևող ճանապարհորդությունից հետո Ծարեցին հասնում է Վենետիկ, սակայն, ի հիասթափություն իրեն, այդ նավահանգստային քաղաքում հմուտ տպագրիչներ չի գտնում: Երբ պատրաստվում է շարունակել ճանապարհը դեպի Հռոմ, այն քաղաքում ժանտախտի համաճարակ է բռնկվել, և բոլոր ճանապարհները փակվել են: Այսպիսով Ծարեցին ստիպված է 14 ամիս անգործ մնալ Վենետիկում, մինչև վերջապես կարող է գնալ Հռոմ:

Հռոմում, սակայն, նույնպես տպարան հիմնելու հնարավորություն չկա. ոչ այնքան տպագրիչների պակասության պատճառով, որքան Հռոմեական կաթոլիկ եկեղեցու դիմադրության պատճառով: Այդ ժամանակաշրջանում այլադավաններին չի թույլատրվում կրոնական գործեր տպագրել: Պրոպագանդա Ֆիդե կոչված հաստատությունը նույնիսկ հայտարարել էր, որ յուրաքանչյուր մարդ, որ հայերին օգնի տպագրական հարցերում, խստորեն կպատժվի:

Ութ ամիս Ծարեցին մնում է Հռոմում, բազմաթիվ անգամ դիմելով կարդինալների ժողովին և, նույնիսկ, Հռոմի պապին: Ի վերջո, երբ պարզ է, որ տպարան ստեղծելու թույլտվություն չի ստանա, մեկնում է Ամստերդամ: Նիդերլանդների բողոքական մայրաքաղաքում այլահավատների նկատմամբ բավականին մեծ հանդուրժողականություն էր տիրում: Մանավանդ, գրատպության արհեստը մեծ ծաղկում էր ապրում այնտեղ:

Ամստերդամում Ծարեցին պայմանագիր է կնքում հայտնի փորագրիչ և գրածուլիչ Քրիստոֆել վան Դեյկի հետ, հայկական տպատառերի երեք հավաքածուի պատրաստման վերաբերյալ: Այս պայմանագիրը մինչ օրս գտնվում է Ամստերդամի քաղաքային արխիվում: Տպատառերի ձևավորման համար օրինակ է ծառայել Մովսես Տաթևացու մի ձեռագիր մատյան: Ծարեցին ձեռք է բերում նաև Քրիստոֆել վան Զիխեմի փորագրած բիրլիական պատկերներից, և ձեռքի տակ է ունենում թռչնագրեր, գլխազարդեր, վերջազարդեր և լուսանցազարդեր:

1660 թվականի դեկտեմբերին Ծարեցին սկսում է տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» գործը: Նա արդեն հիվանդ է, և 1661 թվականի հունվարի 22-ին, երեկոյան ժամը 11-ին, մահանում է: Դեռ չի հասցրել ավարտել գրքի 37 մամուլներից 24-րդի տպագրումը: Գործը շարունակում է Ամստերդամում բնակվող հայ վաճառական Ավետիս Դլիճենցը, ով մանավանդ փակում է տպարանի պարտքերը, այդպիսով դառնալով սեփականատեր:

Ղլիճենցին հաջողվում է ավարտել «Յիսուս որդի» գրքի տպագրությունը. մեծ դժվարություններով, ինչպես ինքն է նշում գրքի հիշատակարանում, քանի որ գրաշարները հոլանդացիներ են, անտեղյակ հայերեն լեզվից ու այբուբենից, և ինքը սրբագրչի աշխատանքի փորձ չունի: Չնայած տպագրական սխալներին (ութաճալ գրքի 24-րդ մամուլը բաղկացած է ոչ թե 8, այլ 10 թերթից, էջակալության մեջ սխալներ կան, և այլն), հիանալի պատկերազարդ գիրք է ստացվել: Ղլիճենցը նամակ է գրում իր եղբոր, Ոսկան Երևանցուն, խնդրելով որ նա գա Ամստերդամ, և ստանձնի տպարանի տնօրինությունը:

Ղլիճենցը ձեռքերը ծալած չի սպասում իր եղբոր գալուն՝ նույն 1661 թ. հասցնում է տպագրել նաև փոքր չափսերով 95-էջանոց մի *Տեղր ժամու եւ պարզաբոսմարի*:

Ոսկան Երևանցին այդ պահին Ուշիի Սուրբ Սարգիս վանքի վանահայրն է: Չկարողանալով միանգամից վայր դնել վանահոր պաշտոնն ու մեկնել Հոլանդիա, սկզբից ուղարկում է իր աշակերտներից մեկին՝ Կարապետ Անդրիանացուն: Վերջինը դեռ 1661 թ. հասնում է Ամստերդամ, և անցնում է գործի: Տպագրում է Մատթեոս Ծարեցու ծրագրած *Սաղմոսարան*, իսկ հաջորդ տարին՝ մի *ժամագիրք*, 3000 տպաքանակով: *Ժամագրքի* տպագրությունից հետո Ավետիս Ղլիճենցը մեկնում է գործուղման, դեպի Զմուռնիա: Լիվոռնոյում հանդիպում է նաև իր եղբոր՝ Ոսկան Երևանցու հետ, որ արդեն Ամստերդամի ճանապարհին է:

Լիվոռնոյում Ավետիսն իր եղբորն է հանձնում Ամստերդամի տպարանի սեփականությունը: Ոսկանը միանգամից չի շարունակում իր ճանապարհորդությունը. խնդիրն այն է, որ Մատթեոս Ծարեցու մահից հետո Հակոբ Դ Զուղայեցի Կաթողիկոսը Ոսկան Երևանցուն է հանձնարարել Աստվածաշնչի տպագրումը, և այնպիսի հսկայական աշխատանքի համար անհրաժեշտ են դրամամիջոցներ: Կարապետ Անդրիանացուն նամակ է գրում, հանձնարարելով, որ նա փորագրել տա խազեր, և ինքը, Ոսկան Երևանցին, մեկնում է Հռոմ, աջակցություն փնտրելու համար:

Հռոմում օգնություն չի ստանում, և վերադառնում է Լիվոռնո, որտեղ երեք ջուղայեցի վաճառականի հետ Աստվածաշնչի տպագրման ֆինանսավորման վերաբերյալ պայմանագիր է կնքում: Պայմանագրում նշվում է, որ Սուրբ Գրքի վաճառքի լրացուցիչ եկամուտը կուղարկվի Սուրբ Էջմիածին և Սուրբ Սարգիս վանք: Այսպես էլ կկոչվի Ամստերդամի այս առաջին հայկական տպարանը՝ «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի», անուն, որը հետագայում տպարանի հետ միասին տեղափոխվելու է Լիվոռնո և Մարսել:

Այդ նույն ժամանակամիջոցում, Կարապետ Անդրիանացին Ամստերդամում սկսել է տպագրել մի *Շարակնոց*, օգտագործելով արդեն պատրաստված խազերը: Երբ Ոսկանը հասնում է Ամստերդամ, և ստանձնում է տպարանի տնօրինությունը, օգնում է ավարտել *Շարակնոցի* տպագրությունը, և սկսում է նախապատրաստել Աստվածաշնչի տպագրումը: Նախքան բուն աշխատանքին անցնելը, դեռ տպագրում է երկու համեմատաբար փոքրածավալ գործ՝ 64 էջանոց *Այբբենարան եւ Քրիստոնէական* և 112 էջանոց *Քերականութիւն*, հավանաբար՝ տպագրական աշխատանքի հետ ծանոթանալու նպատակով:

1666 թվականի մարտի 11-ին Ոսկան Երևանցին սկսում է շարել Աստվածաշնչի տեքստը, իր ազգական Օհաննես սարկավազ Երևանցու և Կարապետ Անդրիանացու

օգնությամբ: Նոր տառատեսակ են օգտագործում, որն ավելի փոքր է քան տպարանի առաջին գրքերի համար օգտագործված տպատառերը: Մատթեոս Ծարեցու և Ավետիս Ղլիճենցի տպատառերը, չնայած որ գեղեցիկ էին, բայց իրենց չափսերով հարմար չէին Աստվածաշնչի համար: Այս փոքր տառատեսակով էլ քառածալ Սուրբ Գիրքը բաղկացած է 1470 երկսյուն էջից:

Սուրբ Գրքի 160 պատկերազարդումները նույն Քրիստոֆել վան Ջիխեմի փորագիր պատկերներն են, որոնց Ծարեցին օգտագործել էր իր տպագրած գրքերում: Կան նաև թռչնագրեր, գլխազարդեր (որոնք բոլորը նույնն են) և եվրոպական ոճով վերջազարդեր:

Առաջին տպագիր այս Աստվածաշունչը հայկական գրատպության պատմության մեջ գազաթնակետ է հանդիսանում, ոչ միայն աշխարհասփյուռ հայերի հոգևոր կյանքի համար ունեցած իր կարևորության պատճառով, այլև տպագրության բարձր որակի շնորհիվ:

Տպագրությունն ավարտվում է 1668 թվականի հոկտեմբերի 13-ին. ամբողջական աշխատանքը տևել է մոտ երկու և կես տարի: Այս նույն ժամանակամիջոցում Ոսկան Երևանցին նաև այլ վեց անուն գիրք է հրատարակել: Նա առաջին տպագրիչներից է, որ հրատարակում է նաև աշխարհիկ գրքեր՝ քերականություն, «Աղվեսագիրք» վերնագրով առակների ժողովածուն, աշխարհագրական և պատմագրական գործեր:

Ցավոք, Աստվածաշնչի տպագրությունից հետո տպարանը կանգնում է ֆինանսական լուրջ խնդիրների առաջ, և 1669 թ. տեղափոխվում է Լիվոռնո, հետո՝ Մարսել: Այստեղ, 1674 թ. փետրվարի 4-ին մահանում է Ոսկան Երևանցին: Մարսելի տպարանը դեռ որոշ ժամանակ շարունակում է իր գործունեությունը:

Լիվոռնոյում և Մարսելում, Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի տպարանում սովորում և աշխատում էր Մատթեոս Վանանդեցին: Հետո նա գնում է Ամստերդամ, որտեղ նոր տպատառեր է պատվիրում հուգարացի փորագրիչ Նիկոլաս Կիշի մոտ, և նոր տպարան է հիմնում: 1685 թվականից մինչև 1718 թ. այս տպարանում տպագրվում է մոտ 25 անուն գիրք և առաջին հայատառ Համադարած աշխարհացոյցը:

Տասնութերորդ դարի կեսերին վաճառական Առաքել Պողոսյանը և հայ համայնքի քահանա Հովհաննես Ամասիացին փորձում են նոր տպարան բացել: Փորագրիչ Յոհան Միխայել Ֆլայշմանը տպատառեր է փորագրում. քահանան թարգմանություններ է կատարում, և հայ համայնքը գրքեր է նվիրում, տպագրության համար օրինակ ծառայելու նպատակով: Անհայտ պատճառներով, սակայն, տպարանն իրականություն չի դառնում: Եվ մինչ օրս Ամստերդամում այլևս հայերեն գիրք չի տպագրվել:

Ամստերդամի համալսարանի գրադարանի հայկական հնագիտ գրքերը

1578 թ. ստեղծվեց Ամստերդամի քաղաքային գրադարանը, որը հիմք դառավ 1877 թ. հիմնված համալսարանական գրադարանի համար: Գրադարանի հավաքածուները գնալով մեծանում էին, և 2007 թ. գրադարանում առկա ձեռագրերը, հնատիպ և հազվագյուտ գրքերը, քարտեզները, գլբոսները, փորագրություններն ու արխիվները

տեղադրվեցին առանձին շենքում: Ամստերդամի կենտրոնական մասում, ջրանցքի ափին գտնվող տների պատմական ճակատի հետևում կա ժամանակակից բոլոր հարմարություններով սարքավորված գրադարանը, որը կոչվում է «Հատուկ հավաքածուներ» կամ «Special Collections»:

Այստեղ պահվող հավաքածուներից մեկը հայերեն գրքերի հավաքածուն է: Այս հավաքածուի հիմքը դրվել է 19-րդ դարի վերջերին, երբ համալսարանական գրադարանը աճուրդում ձեռք բերեց Ամստերդամի (համայնքի նոսրացման պատճառով փակված) հայկական եկեղեցու գրքերը:

Այսօրվա դրությամբ առկա են մոտ հարյուր քսան անուն հնատիպ գիրք, 1660 թվականից մինչև 1850 թ. տպագրված, և ընդհանուր առմամբ, առ այսօր հրատարակված՝ մոտ 350 միավոր, ներառյալ քարտեզները: Ամստերդամի հայկական տպարաններում 1660-1718 թթ. տպված 52 գրքերից Հատուկ Հավաքածուներն ունեն ընդամենը 17 անուն գիրք և 1695 թ. տպագրված քարտեզը, *համադարած աշխարհացոյցը*, որը, ցավոք, թերի է. ութ-մասանոց քարտեզի միայն 5 մաս օրիգինալ են:

Հավաքածուի ոչ այնքան մեծածավալ լինելուն հանդերձ, այստեղ պահվում են հայկական մի քանի հազվագյուտ հնատիպ գրքեր, որոնցից հինգը մեր խնդրանքով վերջերս թվայնացվել են:

Նոյեմբերին Հատուկ Հավաքածուներում փոքր ցուցահանդես է կազմակերպվում հայկական առաջին տպագիր Աստվածաշնչի շուրջ: Այստեղ ցուցադրվելու է, իհարկե, 1666 թվականի Աստվածաշունչը, ինչպես նաև 1657 թ. Ամստերդամում տպագրված հոլանդական (կաթոլիկ) Բիբլիա, որի մեջ օգտագործվել են հայկական Աստվածաշնչի նույն փորագիր պատկերները, և 1733 թ. Վենետիկում տպագրված հայկական Աստվածաշունչը, որի մեջ կան, մասամբ, նորից նույն նկարազարդումները, սակայն այս դեպքում պղնձի վրա փորագրված:

Սույն տարվա նոյեմբերի 13-ին Հատուկ Հավաքածուների դահլիճում տոնակատարություն է տեղի ունենալու, նվիրված Ամստերդամում տպագրված Աստվածաշնչի 350-ամյակին: Միջոցառման ժամանակ Հայաստանի Ազգային Գրադարանին կհանձնվեն վերոհիշյալ հինգ հազվագյուտ հնատիպերի թվային ֆայլերը:

Ամստերդամի Համալսարանի գրադարանի Հատուկ Հավաքածուներում առկա հայկական հնատիպ գրքեր, 1660-1800թթ.

1. Մերսես Շնորհալի, *Յիսուս որդի*, Ամստերդամ 1660թ. [OK 06-183] (49)
2. *Շարակնոց*, տպ. Կարապետ Անդրիանացի ու Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1664թ., [OK 63-6095] (55)
3. *Աստվածաշունչ*, տպ. Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1666թ. [OG 77-124] (59)
4. Th. Petraeus, *Վարդապետություն քրիստոնեական ըստ հայոց*, Ամստերդամ, 1667թ. [OK 93-51, OK 80-219] (64, 65)
5. *Նոր Կտակարան*, տպ. Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1668թ. [OK 06-77] (67)
6. Մովսես Խորենացի, *Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց*, Ամստերդամ, 1668թ. [OK 63-5687] (70)

7. Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց*, Ամստերդամ, 1669թ. [O 62-2398 en O 60-312] (72)
8. *Այբուբեն հայոց/Alphabetvm Armenvm*, Հռոմ, 1673թ., [O 96-47] (81)
9. *Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց*, Մարսել, 1675թ., [OK 91-8] (97)
10. Անդրեաս Ակոլուրոս, *Արդիաս Հայերէն*, Լայպցիգ, 1680թ., [O 63-8622] [K 61-5730], (114)
11. *Ճաշոց*, Վենետիկ, 1686թ., [KF 62-1326 և 1327; KF 62-1172]. (133)
12. *Համադարած աշխարհացոյց*, Ամստերդամ, 1695թ., [HB-KZL 107.13.22] (159)
13. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Ամստերդամ, 1695թ., [OK 63-6085] (160)
14. *Տօմար*, Վենետիկ, 1696թ., [OK 63-5989] (163)
15. Թոմա Գեմբացի, *Յաղագս համահեղինմանն Գրիստոսի*, Ամստերդամ, 1696թ., [OK 63-1210] (166)
16. *Նոր Կտակարան*, Ամստերդամ, 1698-1700թթ., [OK 63-5866] (173)
17. Թոմա Գեմբացի, *Յաղաքս համահեղինմանն Քրիստոսի*, Կ.Պոլիս, 1700թ., [O 62-2600] (186)
18. *Շարականց*, Ամստերդամ, 1702թ., [O 62-2591 և O 60-464] (202)
19. Պետրոս Արագօնացի եւ Բարդուղիմէոս Բոնոնիացի, *Խրատականք եւ Հոգեշահք քարոզք*, Վենետիկ, 1704թ. [OK 63-6087] (211)
20. *Մաշտոց*, Կ.Պոլիս, 1704թ., [O 62-2402] (213)
21. *Բուրաստան աղոթից*, Կ.Պոլիս, 1704թ., [OK 85-61] (215)
22. *Պաշտօն Աստուածային*, Ամստերդամ, 1704թ., [OK 63-5869] (222)
23. *Ժամագիրք սրբուհիոյ կուսին Մարիամու Աստուածածնին*, Վենետիկ, 1706թ. [OK 63-5988 (1)] (228)
24. *Խորհրդարկեր*, Կ.Պոլիս, 1706թ. [OG 63-3086] (229)
25. *Ժամագիրք*, Կ.Պոլիս, 1709թ. [OK 63-6109] (245)
26. Շրոդէր Յովակիմ, *Արամեան լեզուի գանձ*, Ամստերդամ, 1711թ [O 60-510 (1) և O 80-914] (265)
27. Ղուկաս Վանանդեցի Նուրիջանեան, *Հայելի Աստուածաշունչ Հին Կտակարանին*, Ամստերդամ, 1713թ. [OK 63-6107 և OK 63-6113] (279)
28. Ալբերտ Մեծ, *Համառօտութիւն աստուածաբանութեան*, Վենետիկ, 1715թ. [O 62-2584] (293)
29. Ղուկաս Վանանդեցի Նուրիջանեան, *Պարկերասէր պատկերատեաց*, Ամստերդամ, 1716թ. [OK 06-1196 մինչև OK 06-1201, OK 63-6102 և OK 82-72] (296)
30. Յովհան Ոսկեբերան, *Մեկնութիւն սրբոյ աւետարանի որ ըստ Յոհաննու*, Կ.Պոլիս, 1717թ. [O 62-2654] (298)
31. Յովաննէս Արճիշեցի, *Մեկնութիւն* պատարագի, Կ.Պոլիս, 1717թ. [O 62-2588] (301)
32. *Ժամագիրք*, Ամստերդամ, 1717թ. [OK 63-5998 և OK 63-5999] (303)
33. *Պարտէզ հոգեւոր*, Վենետիկ, 1719թ. [OK 63-6000] (312)

34. Պետրոս Արագոնացի, *Գիրք մոլուօեանց*, Վենետիկ, 1720թ. [O 62 2407 և 2408] (317)
35. Պետրոս Արագոնացի, *Գիրք առաքինութեանց*, Վենետիկ, 1721թ. [O 62-2399 և 2400] (323)
36. Աղբիւր բարի, Վենետիկ, 1722թ. [OK 63-5986] (331)
37. Լաւրենտիոս Սկուպոլի, *Հոգեւորական պատերազմ*, Վենետիկ, 1723թ. [OK 63-5995] (337)
38. Վարք երանելոյն սրբոյ Յոհաննիսին, Վենետիկ, 1724թ. [OK 63-5993] (342)
39. Շարակնոց, Կ.Պոլիս, 1724թ. [OM 63-933] (345)
40. Մխիթար Սեբաստացի, *Քրիստոնէական վարդապետութիւն եւ այբբենարան*, Վենետիկ, 1725թ. [OK 63-6098] (350)
41. Մխիթար Սեբաստացի, *Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց*, Վենետիկ, 1727թ. [O 62-2608] (364)
42. Ալբերտ Մեծ, *Դրախտ հոգւոյ*, Վենետիկ, 1729թ. [OK 92-43] (378)
43. Մխիթար Սեբաստացի, *Քերականութիւն գրաբանի* լեզուի, Վենետիկ, 1730թ., [O 62-2599] (384)
44. Աղեքսանդր Յիսուսեան, *Յարացոյց ապաշխարողաց*, Վենետիկ, 1731թ. [OK 63-6112] (392)
45. Դոմինիկոս Բոհուրսի, *Խոկումն քրիստոնէական*, Վենետիկ, 1732թ. [OK 63-5994] (400)
46. Մխիթար Սեբաստացի, *Քրիստոնէական վարդապետութիւն*, Վենետիկ, 1732թ. [OK 63-6110] (401)
47. *Աստուածաշունչ*, Վենետիկ, 1733թ. [OF 63-502] (404)
48. Յակոբ Նալեան, *Վէմ հաւատոյ*, Կ.Պոլիս, 1733թ., [O 62-2598] (409)
49. *Պարուղ գրաջանութեան*, Կ.Պոլիս, 1733թ. [O 62-2587] (412)
50. Յովհաննէս Ոսկեբերան, *Ներբողեանք*, Կ.Պոլիս, 1734թ. [O 62-2655] (415)
51. Գէորգ Մխլայիմ, *Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաթնակաց*, Կ.Պոլիս, 1734թ. [O 60-4930] (418)
52. Մխիթար Սեբաստացի, *Մեկնութիւն գրոց ժողովողին*, Վենետիկ, 1736թ. [O 62-2571] (430)
53. Գրիգոր Նարեկացի, *Գիրք աղօթից*, Կ.Պոլիս, 1736թ. [O 62-2597] (433)
54. Թօմա Գեմբացի, *Հաղագս համահեղինմանն Քրիստոսի*, Վենետիկ, 1737թ. [OK 63-6111] (440)
55. Մխիթար Սեբաստացի, *Քրիստոնէական վարդապետութիւն*, Վենետիկ, 1737թ. [O 62-2607] (442)
56. Ղազար Զահկեցի, *Երգարան*, Կ.Պոլիս, 1737թ. [OK 91-25] (445)
57. *Գիրք ոսկեղէն եւ թուղթ քաղցրալուրք*, Վենետիկ, 1738թ. [O 62-2540 և O 62-2583] (448)
58. Նոր Կտակարան, Վենետիկ, 1740թ. [O 62-2576] (455)
59. *Տօմար*, Կ.Պոլիս, 1740թ. [O 63-4787] (457)
60. *Տօնացոյց*, Կ.Պոլիս, 1740թ. [OK 63-6077/6079/6081/6093 և O 62-2581] (458)

61. Գրիգոր Սկեւոացի, *Գիրք Աղօթից*, Կ.Պոլիս, 1742թ. [OK 63-6090/6091/6097] (472)
62. Շարակնոց, Կ.Պոլիս, 1742թ. [O 62-2580] (473)
63. Սարգիս Շնորհալի, *Գիրք մեկնութեան եօթն թղթոյն Կափուղիկէից*, Կ.Պոլիս, 1744թ. [O 61-8738] (483)
64. Յակոբ Նալեան, *Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ*, Հտ. Բ, Կ.Պոլիս, 1745թ. [OM 63-953] (485)
65. Ներսէս Շնորհալի, *Յիսուս որդի*, Կ.Պոլիս, 1746թ. [O 62-2538, O 62-2592 և OK 63-6088] (487)
66. Գրիգոր Տաթեւացի, *Ոսկեփորիկ*, 1746թ. [O 62-2539] (488)
67. Յակոբ Նալեան, *Հոգեշահ*, Կ.Պոլիս, 1746թ. [O 62-2586] (489)
68. Յակոբ Նալեան, *Քրիստոնէական ուսանելի*, Կ.Պոլիս, 1747թ. [OK 63-6101] (493)
69. *Տօմար կարճառօտ*, Վենետիկ, 1748թ. [OK 63-6096 և OK 63-6108] (496?)
70. *Սաղմոսարան*, Վենետիկ, 1748թ. [OK 63-6096] (500)
71. Ֆրանչիսկոս Սալեզացի, *Ներածումն առ Զերմեռանդ կեան*, Վենետիկ, 1748թ. [O 62-2578] (501)
72. Մատթէոս Եղոկացի, *Վարք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին*, Վենետիկ, 1749թ. [O 62-2574, O 62-2405, O 62-2406 և O 62- 2572] (504)
73. *Տեղրակս այս, որ կոչի Սապէթայի Սեւու...*, (Կ.Պոլիս, 1750թ. ?) տիտղոսաթերթ չկա, [OK 85-62] (1082)
74. Աթանաս Աղեքսանդրացի, *Գիրք պատասխանական*, Կ.Պոլիս, 1749թ. [OK 63-6080 և 6083] (510)
75. Գէորգ Մխլայիմ, *Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան*, Կ.Պոլիս, 1750թ. [OK 63-6086] (525)
76. *Ժամագիրք*, Կ.Պոլիս, 1752թ. [OK 63-6084] (541)
77. Մխիթար Սեբաստացի, *Խոկումն վարուց*, Վենետիկ, 1753թ. [OK 63-5987] (552)
78. Մխիթար Սեբաստացի, *Ձայն Քրիստոսի եւ հաւատացեալ հոգւոյն*, Վենետիկ, 1753թ. [OK 63-5987] (553)
79. Բենեդիկտոս Ժդ, *Թուղթ հանրական*, Հռոմ, 1755թ. [O 62-2404] (563)
80. Յակոբ Նալեան, *Ճրագ ճշմարտութեան*, Կ.Պոլիս, 1756թ. [OK 63-5914] (564)
81. *Աւերարան*, Վենետիկ, 1759թ. [OK 63-6082] (580)
82. *Արիեստ փրկութեան*, Վենետիկ, 1760թ. [OK 63-5997] (588)
83. *Գիրք հրաշից*, Վենետիկ, 1772թ. [O 62-2570] (645)
84. *Ժամագիրք*, Կ.Պոլիս, 1772թ. [O 62-2577] (652)
85. Մովսէս Բաղրամեան, *Յորդորակ*, Մադրաս, 1772թ. [O 62-2573] (656)
86. *Կարգ թաղման կարգաւորաց*, Էջմիածին, 1777թ. [O 85-1] (692)
87. *Սաղմոսարան*, Կ.Պոլիս, 1778թ. [OK 63-6078] (697)
88. *Ժամագիրք*, Կ.Պոլիս, 1779թ. [OK 63-6099] (706)
89. *Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց*, Լոնդոն, 1780թ. [O 62-2593] (715)
90. *Սաղմոսարան*, Կ.Պոլիս, 1780թ. [OK 63-5688, OK 63-5990, OK 63-5991, OK 63-5996] (711)

91. *Սաղմոսարան*, Կ.Պոլիս, 1780թ. [OK 91-72] (712)
92. Իգնատիոս Աստուծազգեաց, *Թուղթք*, Կ.Պոլիս, 1783թ. [OK 63-6076 և O 62-2579] (742)
93. Մանուէլ Սրմաքէշ Կեսարեան, *Հիմն ստուգութեան*, Կ.Պոլիս, 1783թ. [O 62-2589] (745)
94. *Ժամագիրք*, Պետերբուրգ, 1783թ. [OK 63-6077, OK 63-6079, OK 63-6081, O 62-2581 և OK 63-6093] (754)
95. Միքայէլ Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, 1784թ. [Հատոր Ա և Գ, OM 63-934 և 935] (755)
96. *Շարականոց*, Կ.Պոլիս, 1784թ. [OK 63-6094] (758)
97. *Այբուբենք Հայոց*, Հռոմ, 1784թ. [O 87-6 (3)] (760)
98. Կուլիեւմոս Ռօպէրթսօն, *Վիպասանութիւն Ամերիկոյ*, Տրիեստ, 1784թ. [O 62-2653] (763)
99. *Պատմութիւն Սուրբ Գրոց*, Պետերբուրգ, 1785թ. [O 62-2582] (780)
100. *Աւերարան ճաշու*, Պետերբուրգ, 1786թ. [OM 63-930 և 931] (802)
101. Ղազար Զահկեցի, *Աստուածադէրս*, Պետերբուրգ, 1786թ. [O 62-2585] (805)
102. Ներսէս Լամբրոնացի, *Արեւնաբանութիւն եւ ճառք*, Վենետիկ, 1787թ. [O 62-2590] (807)
103. Ներսէս Շնորհալի, *Ընդհանրական*, Պետերբուրգ, 1788թ. [O 62-2602] (842)
104. Գրիգոր Նարեկացի, *Գիրք աղօթից*, Կ.Պոլիս, 1789թ. [O 62-2594, -2595 և -2596] (850)
105. *Տարեցոյց եւ Օրացոյց*, Աստրախան, 1797թ. [O 62-2364] (983)